# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
30 օգոստոսի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

## ՕՐԱԿԱՐԳ

1. *Խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*
   */ զեկ. Մ. Ա. Զաքարյան /*
2. *Ուսումնական գործընթացի կազմակերպում:*
   */ զեկ. Մ. Ա. Զաքարյան /*
3. *2016-2017 ուստարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:*
   */զեկ. Մ. Ա. Զաքարյան/*
4. *Անվանական կրթաթոշակների ներկայացում:*
   */զեկ. Մ. Ա. Զաքարյան /*

**ԼՍԵՑԻՆ-** Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2016-2017 ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը (կցվում է արձանագրությունը):

   **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Գ. Վ. Գուլակյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի պլանը կազմվել է ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան և առաջարկեց ներկայացնել հաստատման:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2016-2017 ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը անդրադարձավ 2016-2017 ուստարվա ներֆակուլտետային գործընթացի հետ կապված ընթացիկ հանձնարարականներին՝ ընդգծելով, որ ֆակուլտետում պետք է պահպանել ուսումնական պրոցեսի կարգապահությունը համապատասխան ուսումնական պրոցեսի կանոնների:

   **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Իրականացնել մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2016-2017 ուստարվա I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածության պլանների: Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բաշխվել են բոլոր առարկաները:

   **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** ,,Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության՞ ամբիոնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել 2016 -2017 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

   **ՈՐՈՇԵՑԻՆ-** Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2016 -2017 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Քննարկվեց անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը: Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակների հավակնորդների ցուցակը. Անահիտ Հովսեփյան IV կուրս, Նառա

Մնացականյան ՔԿԳ III կուրս: Անահիտ Հովսեփյանը ունի հասարակական ակտիվություն, մասնակցում է զեկույցներին, և երկու կիսամյակ անընդմեջ գերազանցիկ է_ներկայացվում է “Համլետ Կարայան” անվանական կրթաթոշակի: Նառա Մնացականյանը ունի հասարակական ակտիվություն, մասնակցում է զեկույցներին, և երկու կիսամյակ անընդմեջ գերազանցիկ է_ներկայացվում է “Մոնթե Մելքոնյան” անվանական կրթաթոշակի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Ցուցուլյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել անվանական կրթաթոշակների ցուցակը և ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը՝

1. Անահիտ Հովսեփյան_”Համլետ Կարայան” անվանական կրթաթոշակ
2. Նառա Մնացականյան_“ Մոնթե Մելքոնյան” անվանական կրթաթոշակ

ՆԱԽԱԳԱՀ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2016-17

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

| ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | ՕՐԱԿԱՐԳ | ԶԵԿՈՒՑՈՂ | ԾԱՆ ԹՅՈ |
|---|---|---|---|
| 30.08.2016թ. | 1. Խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:<br>2. Ուսումնական գործընթացի կազմակերպում:<br>3. 2016-17թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:<br>4. Անվանական կրթաթոշակների ներկայացում | Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան | |
| 01.10.2016թ. | 1. 2016-17թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:<br>2. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:<br>3. Կրթական ծրագրերի վերանայում:<br>4. 2016-17թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:<br>5. Այլ հարցեր: | Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան | |
| 27.11.2016թ. | 1. Ֆակուլտետի կանոնադրության քննարկում և հաստատում<br>2. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:<br>3. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ընդլայնված – արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:<br>4. II ընթացիկ քննությունների – ստուգումների գրաֆիկների հաստատում:<br>5. Այլ հարցեր: | Մ. Ա. Զաքարյան<br>Ռ.Ռ. Քամալյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան | |
| 25.12.2016թ. | 1. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:<br>2. II ընթացիկ քննությունների ամփոփում: | Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան | |
| 06.02.2017թ. | 1. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփում:<br>2. Հետազոտությունների ծավալի աճի, դասախոսական կազմի – ուսանողների ներգրավվածության ընդլայնում:<br>3. 2016-17թթ. ուս. տարվա II կիսամյակի դասացուցակների հաստատում:<br>4. II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:<br>5 .Այլ հարցեր: | Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան<br>Մ. Ա. Զաքարյան | |

| | | | |
|---|---|---|---|
| **10.03.2017թ.** | *1. Մանկավարժական պրակտիկաների ամփոփում:*<br>*2. Կուրսային աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:*<br>*3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացի քննարկում՝ ակադեմիական ազնվության ապահովում:* | *Ք.Օթարյան*<br>*Ա.Վ. Յուցույան*<br>*Մ. Ա. Զաքարյան* | |
| **20.04.2017** | *1.Կրթական ծրագրերի պատասխանատուների հաշվետվություն:*<br>*2. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի մշակում:*<br>*3. Ուսումնագիտական գործընթացի իրականացում:*<br>*4.Ընդունելության մարքեթինգային գործընթացի քննարկում՝ համապատասխան աշխատաշուկայի ընթացակարգին:* | *Կ.Հ. Հովնեփյան, Ա.Սիմոնյան*<br>*Մ. Ա. Զաքարյան*<br>*Մ. Ա. Զաքարյան*<br>*Մ. Ա. Զաքարյան* | |
| **10.05.2017** | *1. Ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ապահովում:*<br>*2. 2016-2020 ուս. տարվա ուսումնական պլանների քննարկում և հաստատում:*<br>*3. Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:* | *Ա.Վ. Յուցույան*<br>*Մ. Ա. Զաքարյան*<br>*Մ. Ա. Զաքարյան* | |
| **30.06.2017** | *1. Ուսումնական տարվա ամփոփում:*<br>*2. Այլ հարցեր:* | *Մ. Ա. Զաքարյան*<br>*Մ. Ա. Զաքարյան* | |

*ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ*